78. ԻՐԵՔ ԳՈՂԵՐ

Իրեք ընկեր կէղնին, կելնին կէրթան գողութենի։ Կէրթան մեծ դաշտիմ՝ ռաստ կիգան. չենլընք չկեր ուրումց հ՝առեջ։

Կտեսնան օր էդ դաշտի մեջ ավերակ տունմ՝ կա, կէրթան կըմտնեն էդ տան մեջ, կտեսնան օր մարթ ու մատաթ չկա։

Կըսեն իրարու.—Ախբըրտանք, էկեք էդա գիշեր էդա տուն մընաք, հարկավ էդա տան տերմ՝ կա, տեսնաք ո՞րն է։

Կմտնին խոտերու տակ ու կմնան. կտեսնան օր իրկուն էղավ, մարթմ՝ ետև էձգեր է տաս տասնըչորս հոգի, էկավ մտավ ներս։ Օր ներս մտավ, կնկան ըսեց.—Կնի՛կ, էսօր իրեք մարթու կերակուվ ավել էփե, մղի մսաֆըր կա։

Կնիկն էփեց, բերեց սեղան դրեց։ Վերուց էդ մարթն ըսեց.—Ախբըրտանք, հ՝ելեք էկեք հաց ուտենք։

Ըսինք.—Յա՜, էդա մարթ իմա՞լ մղի տեսավ։

Հ՝ելանք, գացինք նստանք, կերանք, մըր հաց խըլըսանք, վերուց էդ մարթ մըզի ըսեց.—Ախբըրտանք, գողութեն հ՝ըմեն մարթու փեջակն է, անկաճ էնեք, ձզի բանմ՝ պատմիմ։ Ավուրմ՝ մեկ հ՝ելա էրկու մարթ առա իմ հետ ըսի, էրթանք գողութենի։ Հ՝ելանք, իրեք հոգի ու հ՝ընկանք ճամբախ, գացինք։ Շատ գացինք, քիչ գացինք, գացինք մեծ դաշտմ՝ հ՝ելանք դուրս. էդ դաշտին նը՛ լենք կար, նը՛ հ՝երկենք. մեկ լե նայինք տեսանք ձիավորմ՝ մզրախ դրուկ թեի վրեն, ջուն հ՝առեջ՝ էն դեեն կուգա։ Էկավ, էկավ, հասավ մըր մոտ, իջավ ձիուց։ Իջավ ձիուց, բռնեց զիրեք գողս, կապեց ու ջան ըսեց՝ «Գնա խորմ՝ փորե»։ Շուն գնաց, ջոջ խորմ՝ փորեց։ Օր փորեց, էդ

ձիավոր էկավ մըր իրեքիս տարավ հորու մոտ, ու բռնեց թալեց խորու մեջ, հող տվեց վրեն, ըսեց շան՝ «Նստի դու վըր էդրանց պախե, հար ես դառնամ իգամ»։

Մարթն, դու մասի, ուր շան խուլ դիներ. օր անոթցավ, ճանկիրով հողեր տվեց մեկ դին, հանեց իմ էրկու ընկեր, կերավ. եփ իմ էրկու ընկեր կերավ, խըլըսավ, իմ տեխ քիչմ՝ լենցավ։ Ըսի՝ «Ո՛վ աստված, էդա ջուն իմ էրկու ընկեր կերավ, հմկա պտի հ՝իգա, դիս ուտե, կանի, չէղավ, օր շուն ուր գլուխ խոթեց հորու մեջ, կըթալեմ բռնեմ վիզն ու էրկու ձեռքով խալիմ ըմ կճխտիմ սատկեցում»։ Շուն օր ղգլուխ մտուց հորու մեջ, զիս լե պիտի ուտեր, էրկու ձեռքով բռնի շան վիզն ու քանի ուժ կեր՝ քամեցի, խեղդեցի, հ՝ելա հորուց օր պիտի փախնեք։ Ջա՛նըմ, ըսի, ես հ՝ուր պիտի փախնիմ ազատիմ, հմկա էտոր տեր օր էկավ տեսավ ջուն չկա, խեղդեր եմ, թալեր եմ մեկ դին, հազար կտոր կէնե զիս։ Քիչմ՝ տեխ էկա, տեսա ճամբու վրեն ծառմ՝ կեր, ախբուրմ՝ լե ծառու տակ. հ՝ելա էդ ծառու գլուխ նստա։ Նստա, ըսի՝ «Շան տեր ինչ պիտի գա Լնե ընծի, թող դա, ու թողե էրթա, ես կիշնեմ էրթամ»։

Սահաթի մը չափ մանցի էդ ծառու գլուխ, տեսա, անհոգի, դալըմ ձիավորմ՝ կուքա։ Կուքա հորու մոտ կտեսնա օր մարթ չկա, շուն լե խեղդված, ձգված մեկ դին, հերսոտավ, հեծավ զուր ձին ու քշեց էկավ էդ ծառու տկու ախբրի վրեն իջավ, զարկեց ուր մզրախ գետին ու սկսեց աղոթք էնել։ Աղոթք էրած վախտ, չէ օր զգլուխ կվերցուն վի, իշքեց տեսավ օր ծառու գլուխ նստուկ եմ, ձեն չհանեց՝ հար ուր աղոթք էրեց, վերջացուց։ Օր վերջացուց, դառձավ ընծի ըսեց՝ «Իմ շուն խեղդեցիր, հիմի էլ փախեր ես, էկի հ՝ելի էդա ծա՞ռ. իմ ձեռքեն հ՝ո՞ւր կփախնիս, իշի էկուր ցածմ»։

Ըսի՝ «Զը՛մ իշնի»։ Ինք հ՝ելավ ծառ, օր զիս իջուցեր։ Օր հ՝ելավ ծառ զիս պիտի իջուցեր՝ կալիմըմ բռնեցի ծառու ճղերը, քանի խըվաթ կեր, լանկեմ զարկի, գլորվավ, ծառուց ընկավ մզրխի վրեն, մզրախ առավ մեջը, փորուց տվեց դուրս, մեռավ։

Իշա ծառուց ցած, հագա էդ մարթու շորեր, առա մզրախ ձեռքըս, հեծա ձին ու ձիու գլուխ թողի, ըսի՝ «Ձին հ՝ուր օր գնաց կանավ, կէրթամ հ՝ոնի կիշնիմ»։ Ձին գնաց դեմ ուր տիրոջ տան դուռ իջավ, իշա ձիուց, շորովմ բերանս փաթեցի, ձեն տվի, մշկներ հ՝ելան դուրս, ու քաշեցին իմ ձին տարան ներս կապեցին։ Ես լե գացի ներս։ Էդ մարթուն առնձի սենյակմ՝ կեր, նստա, թափան էկան իմ բոլոր, ինչ օր կխոսան՝ պատասխան չեմ տար, բերանս չբացվի։ Քիչմ՝ մանցի, մեկ լե տեսնամ էդ մարթու կնիկ էկավ իմ կուշտ նըս-

տավ, ինչքան օր ինք կվերու իմ հետ կխոսա, ես ջուհաբ չըմ իտա, բան օր կէնիմ ձեռքով կհասկցում թե հիվանդ իմ, ատըմներս կցավի, չըմ կառնա խոսա։

Մնաց, քնելու ժամանակ օր էկավ, պիտի պառկենք, մանցի ես ու էդ մարթու կնիկ մինակ, վերցի ըսի՝ «Հշթա, ես զքու իրիկ սպաներ իմ, էկեր իմ հ՝ընկի քու թոռ, կուզիս սպանե զիս, կուզիս առ, իմալ դինաս՝ էրե»։

Կնիկն ըսեց՝ «Պետք չէր էղներ, քանի օր էղեր է, քզի լե հանիմ ձեռքես չէղնի, ես քզի, դու ընծի»։

Մարթն ըսեց՝ «Մադամ օր դու խարուլ կընես էդ բան, հոտ դուրս չելնելու համար, հ՝ելի բառցի քու ունեցածն ու չունեցած, էրթանք իմ տուն»։

Կնիկն ըսեց՝ «Շատ աղեկ կընես»։ Հ՝ելավ ուր էղածն ու չէղածը ժողվեց, բառցանք ձիանեսներու վրեն, ձիմ՝ հեծավ ինք, մեկ լե՝ ես, զարկինք էկանք մըր տուն։

Էդա լե իմ կնիկն է, չըք հավդընա, ուրնե հարցուցեք, մեղք էձգեք ուր վիզ, թե կնիկ ի՛մալ է, ի՛մալ չէ։

Կնիկն վերուց ըսեց.—Հմա՛լ, ինչո՞ւ հմալ չէ։

Վերցուց մըզի ըսեց.— Գողութեն կէնեք, գացեք էսպես գողութեն էրեք։

Կերանք, խմեցինք, պառկանք քնանք։ Հ՝ելանք լուսուն մենք թողեցինք դառցանք ետ. էն մարթ վերուց ուր կնիկ ու ճիժ գնաց սար պտուտելու, տուն մնաց դարտակ։

Էկանք, բայց մըր ձեռք չսրթրի, ըսինք.—Կարելի է էդ մարթ մըզի խաբեց, դրեց ճամբու էկանք. դառնաք մեկ լե էրթանք մըտնիք էդ մարթու տուն, սըրա բերինք տեսնաք ի՛նչ կա չկա՝ թալինք առնիք հ՝իգանք։

Հ՝ելանք էկանք, էկանք՝ մարթ չկեր տուն. դրռ չըն էկած Նն սարեն։ Մտանք խոտի մեջ աղեկմ՝ ծածկըվեցանք, ըսինք.—Մընաք, գիշեր օր քուն հ՝ընցավ ուրանց վրեն, հ՝ելնիք, ի՛նչ կա, չկա՝ քոմեք կառնիք ու փախնիք։

Օր մտանք խոտերու տակ պատըվտանք, մութ տվեց, մեկ լե տեսնաք էդ մարթ, օր առչին իրկուն ուր գլխու գալած պատմեց մզի, տաս տասնըչորս ջանով էկավ մտավ ներս։ Օր մտավ ներս, կնկան ըսեց.—Կնիկ, կերակուլ էփած ատեն, իրեք մարթու կերակուլ ավել էփե։

Նփ օր կերակուլ էփավ, բերին սեղան դրին, մեկ լե տեսանը էդ մարթ վերուց մըզի ըսեց.—Հե՛յ, խոտու տկու մարթե՛ր, հ՝ելե՛ք էկեք հացի վրեն։

Մենք զարմացանք, ըսինք.—Աստծու սիրուն էղնի, չէղնի՞ աղեկ չրբ ծածկվեր է, տեսավ մըզի։

Իմ ընկերներ ըսին.—Ջանըմ, իմալ ենք ծածկվի օր տեղ մը չկրևևր։

Հ'ելանք, սև էրեսով էկանք նստանք սեղնի վրեն, հաց կերանք, փրցանք, վերուց էդ մարթ ըսեց.—Ախբըրտա՛նք, իմ դիացածով ես լրևկ ձդի բան պատմեցի, դուք ինչո՞ւ անկաճ չէրիք, մանցիք հ'ոյա։ Ախբրբրտանքս, ձըր աղեկ կուղիմ ես, դողութեն հ'ըմեն մարթու դործ չէ, իմ կարճ խելքին քիչ մը անկաճ էնիք, գեշ չէղնի, անկաճ էնեք, պատմութունմ' լե էսօր էնիմ ձզի։

Ախբըրտանք, ավուրմ' մեկ, էն առաջին ընծի խրատ չէղավ ձըր պես, հ'ելա, էրկու ընկեր առա իմ հետ, գացինք դողութենի։ Դացինք, ընկանք մեծ դաշտիմ մեջ, կքելինք, չքելինք՝ ետք ու խըլիս չկա։ Տեսանք էդ գաշտի մեջ տեխեմ ծուխ կելնի, գացինք էդ ծխին մոտեցանք, տեսանք մեկ կտոր պատ, հ'առիք, փանջարեն, բարե շինված տունմ', մտանք էդ տուն, տեսանք օր մեկ աչքեն դևըմ թոնիր վառեր է, շիշ դրեր է կրակ ու նստի թորվան կուշտ։ Եփ մդի տեսավ, ըսավ՝ «Վո՛ւ, հողածնները, դուք բարով ու խերով էկաք, ես ձդի ճրագով կփնտռտի, բայց դուք ցերեկով էկաք ընծի ռաստ, տը՛ հրամեցեք, նստեք»։ Հ'նցանք, նստանք, մեկ լե տեսնամ հ'ելավ, մեծ քարմ' տվեց դռան դեմ ու էկավ նստավ։ Քիչմ' մանցինք, շիշ դրուկ էր կրակի մեջ, հանեց, զարկեց իմ մեկ ընկեր ու ըռնեց վըր թորվան, էփեց կերավ։ Էն օր կերավ խըլըսավ, էսա հեղ դորն էկավ մեկել ընկերոջ, զարկեց շիշ, բռնեց կրակի վրեն, էփեց կերավ, մանցի ես մինակ։ Եփ իմ էրկու ընկերն կերավ, կշտացավ, քուն թափավ վրեն, թրմշավ, քնավ, բայց շիշ գրուկ էր կրակ, կըկարմրցուցներ, օր հաղր էղներ։ Օր քնավ, ըսի՝ «Մեռնելուց էն դևն էլ ի՞նչ կա». հ'ելա շորովմ' բռնեցի էդ շշի մեկ գլխեն ու տարա դրի էտոր ճակտի վրավու աչքին, էնդոր աչք ճակտի վրեն էր, մեկ աչքեն էր, տարա դրի աչքի վրեն, աչք առավ ճենճռտալ, ինք իմցավ, ես փախա, էկա մտա օչխրի գոմ։ Օր փախա, կռահեց ես կփախնեք, էաջեց շիշն հանեց աչից մեջեն, թալեց իմ ետևեն, չառավ, գնաց օչխրի մեջ ընկավ, հարիր գլուխ օչխար սպանեց։

Էդ օր տեսա, շմփլա, հ'ելա գոմու հ'առիք, գերանմ' բռնի, օդներս զարկի պատ ու կախվա, մանցի։

Աչք բանե հ'ելեր էր, էլ չտեսներ, քոռ-քոռ հ'ելավ էկավ փընտռեց զիս, բայց չկառցավ օր գտներ, թողեց գնաց։

Ըսեց՝ «Հողածի՛ն, դու ինչ մարթ իս օր իմ ձեռքեն կազատիս

կէրթաս, կանի տես՝ քեզի ինչպե՞ս գտնամ». ըսեց ու էկավ ետի դուռ բացեց, օշխրներ մեկիկ-մեկիկ էրեց դուրս, էկավ ընկավ էնդին ու վենդին, ախբը չգտավ, ներս մանցեր էր մեկ հատ մեծ օշխար մը, հ'առքեն իջա, բռնի էդ օշխրի փորու տկու մաղերն ու կախվա մանցի։ Օր կախվա մանցի, աստծու հրամանով օշխարն հ'ելավ լեզու, ըսեց՝ «Հողածին, մը՛ վախենա, դու աղեկմ՝ գրկվի իմ փոր, ես քզի կաղատեմ»։ Գրկվա էդ օշխրի փոր, էկանք դռան դեմ, դև առավ օշխրի օտներու քըստ-քըստուն, ձեռք բերեց օր բռներ, օշխար մկմկաց թռավ դուրս։ Եփ հ'ելա դուրս, կանա դուռ, բռռացի. «Քո՞ռ դև, տեսա՞ր իմալ քու աչք հանի ու քու ձեռքեն աղատվա, հմկա քու ձեռքեն ի՞նչ կիգա՝ էրեմ»։ Քոռ դևի սիրտ դաղրղնոտեր[1] էր, կատղավ ու ընկավ իմ ետև. հ'ո՞ւր կառնա հասնի ընծի, փախա հ'ելա քարերու մեջ մտա, ախբը իմ ըռեճն առավ էկավ ետևես, տարա, հաջաղեմ վար կիջնեք, քֆրտեցի պտուղ աչք՝ կատղավ ղուր միս կուտեր, էնեց օր թալեր զիս բռներ՝ գլորվավ էդ քարերուց էկավ ցած, էղավ հազար կտոր։ Օր գլորվավ սատկավ, գացի էտոր էրկու անկաճ կտրի, թալի ճեպս հ'ուխլամա էրի ու կուշտ ու բոլոր, տեսա քսան հատ լե բալնիք կա մոտ, հանեցի, առա էկա մտա էդ դևի տուն, դուռմ՝ բացի լիք օշխար էր, դուռմ՝ լիք իսնի շանդակ էր ու օսկոր, դուռմ՝ օսկի ու արծաթ էր, դուռմ՝ լե բացի՝ տեսա խորոտիկ ախչիկմ՝ կա էդ տեխ, ախբուրմ՝ կթալե ուր հ'առեչ, օսկի թաս ձեռք, կիտա ախբրի դեմ, կլցնե կդատարկե, կդառնա օսկի։

Էդ ախչիկն է, զիս օր տեսավ, ըսեց՝ «Կտրի՛ճ, դու իմա՞լ էկար մտար էդա տեխ, դևն օր էկավ քի տեսավ, կելնի կուտե, դու ափսոս իս»։ Վերցի ասի. «Դևի կողմանե գու սաղ մնաս, դևն սպաներ իմ, չըս հավատա էդա լե ուր անկըճներ՝ հանա ին իմ ճեպս», հանի դրի հ'առեչ։

Ախչիկն եփ տեսավ դևի անկճներ, շատ ուրախցավ, ավտըցավ օր դև սպանվեր է, ըսեց՝ «Ես քզի, դու ընծի». հ'ելանք առանք իրար, ինչ օր կար՝ օսկի ու արծաթ, բառցանք էկանք մըր տուն։

Եթե չըք հավատա էլ, դևի կնիկ հոդ ա, կանչեք, հարցուցեք, էդ տեսա՞կ է, էդ տեսակ չէ։

Կնիկն ըսեց.—Մա՛րթ, իմալ օր կպատմիս, հմալ է։

— Ախբըրտանք, գողութեն էս տեսակ չէ, օր դուք կընեք, հ'ելեք, թողեք գացեք։

Կերանք խմեցինք, պառկանք քնանք։ Հ'ելանք լուսուն, փիս-

---

1 Գաղգել (Ծ. Բ.)։

փիս թողինք քաշվանք, ինք լե հ'ելավ վերցուց ուր կնիկն ու ճիժ ղնաց սարեր, տուն մնաց ամայի։

Հ'ելանք գացինք ճամբու հետ, սկսեցինք իրարու հետ կռվիլ. թե ո՞րն էր մանցի դուրս, օր էդ շուն շանորթին տեսավ, կանչեց մղի կերակրի։

Էն ըսեց.—Ես չե՛մ։ Էն ըսեց,—Ես չե՛մ։

— Դավրրսի օր, սրթար չընք էնի, ըսինք, էսօր լե էկեք էրթանք լավմ՝ ծածկվինք, չէղնի մզիկ տեսի։

Հ'ելանք էկանք մրր ավալքու տեխ, մտանք խոտու մեշ ծածկվանք։

Իրկուն էղավ, էդ մարթ մեկ լե դառցավ ուր կնիկ ճժով, տաս տասնըշորս ճանով, էկավ մտավ ուր տուն։

Կնկան ըսեց.—Կնի՛կ, կերակուլ էփած ադեն նորեն իրեք մարթու ավել էփե։

Կնիկ կերակուլ էփեց, սեղան բերեց դրեց. մեկ լե տեսնամ՝ էդ մարթ կանչեց ըսեց.—Խոտու տկու մարթիկ, հ'ելե՛ք էկեք հաց ուտենք։

Առջին խոսաց՝ անկաճ չէրինք, չէկանք։ Մեկ լե կանչեց։ Նորեն անկաճ չէրինք, ի՞նչ հ'երեսով հ'ելնիք էրթանք, իրեքի վրեն՝ հ'ելանք էկանք։

Էկանք նստանք սեղան, հաց կերանք, խըլրսանք, քաշվանք ամենքս դեմըմ նստանք։ Օր քաշվանք ամենքս դեմըմ, վերուց մզի ըսեց.—Ախբըրտանք, էղավ էդա էրկու օր, ես անուշութենով կըսիմ ձզի, դուք անկաճ չըք ընի. ինչո՞ւ ինատ իք էրի, իմ տան թարկ չըք իտա։ Էսօր լե ձզի, պղտրկիկ պատմութենմ՝ կէնիմ, լսեցիք՝ լսեցիք, չլըսեցիք՝ ձըր մեղք ձըր վիզ. աղեկ անկաճ էրեք, ախբըրտանք, դողութեն հմլա չէ։

Անդամըմ հ'ելա, էրկու ընկեր առա հետս, գացի խարիբ էրկիր մը, փարա աշխատելու։ Ժամանակմ՝ մանցի էդ տեխ, բավականին փարա բերի ձեռքս, իմ ընկերներ լե դարտակ չեն։ Ըսի իմ ընկերներուն, ախբըրտա՛նք, հերիք է ինչքան օր աշխատանք, հ'ելեք էրթանք մրր տներ։ Հ'ելանք նստանք կյամու մեջ օր հ'իգենք, կյամին էկավ ծովու մեջ տեխ, քամիմ՝ հ'ելավ, տաղլեմ՝ վերուց մզի ասպած ինք հեռու արասցե։ Կյամին բաթմիշ էղավ, տախտրկիմ կտորմ՝ ընկավ ձեռքս, նստա տախտկի վրեն, լոզ տվի, էկա ցամաք տեխմ հ'ելա դուրս։ Եփ հ'ելա դուրս էդ ծովու մեջեն, մեկ էլ տեսնամ աչքերս լուս չմնաց, բան չըմ տեսնա։ Ըսեցի. «Տեր աստված, էդ ի՞նչ փորձանք էր էկավ գլխուս»։ Մարթ չըմ տեսնա, անկաճս

դետին տրի, մտիկ տրի, տեսա օր ձենմ՝ կուքա. բռնի էդ ձեն գացի, տեսա օր քանիմ՝ ռնճրար ին, վար կէնին։

Գացի մոտեցա, էդ մարթոց բարև տվի, բարև առան։

Հարցուցի էտոնց մոտեն, թե ձըր էրկիր լո՞ւս է, չէ՞ մութն է։ Ըսեցին՝ «լուս է»։ «Ըպա,—ըսի,—իմ աչքեր հ՝որի՞ մթներ է, բան չտեսնա, հար էդա գախ լե իմ աչքեր կտեսնեն, օր հ՝ելա ցամաք՝ էլ չըն տեսնա»։

Էդ ռնճրրներ վերցին ըսին. «Մըր էրկրի ադաթ էդպես է. ինչ օտար մարթ օր հ՝իգա մըր էրկիր, աչքեր չըն տեսնա առչին հեղ, բայց օր կերավ մըր էրկրի հաց՝ կբացվի»։

Ասի՝ օր էդպես է, քիչմ՝ հաց տվեք ուտեմ, իմ աչքեր բացվին։

Ասին՝ «Թե օր կէղնիս մզի տղա, հաց կիտանք ուտես»։ Իմ ճարս կտրավ, ըսի՝ «կեղնիմ». տվեցին քիչմ՝ հաց կերա, աչքերս լուսավորվավ։

Էդ մարթոց օր էղեր ենք տղա, հետ ուրանց մինչև իրկուն վար ըրի, իրկուն օր էղավ՝ հ՝ելա գացի էտոնց տուն, էղեր ենք տան տըղա։ Ժամանակմ՝ մանցի էդ մարթու մոտ։ Հ՝ելավ իմ խեր ընծի կարգեց։

Էդ տեխաց սովորութեն էլ էն տեսակ է օր կնիկ մեռնի՝ իրիկ կտանեն խետ կխորեն, իրիկ մեռնի՝ կնիկ կտանեն խետ կխորեն։

Ժամանակմ՝ մնացինք։ Էղավ օր իմ կնիկ մեռավ, առան էրկուքս գնացին, օր մզիկ խորեն։ Տարան դուռըմ բացին, հարիր մատ թարանճա իշանք մութ տեխմ՝ մեղի դրեցին էդ տեխ, հ՝ելան դուռ փակեցին, թողին էկան։ Մենք մանցինք էդա տեխ, իմ հետն էլ դըրած են քառսուն օրվան խաց։ Եվ քառսուն օր լմնցավ, իմ հաց լե խըլըսավ, տեսա, դռան ձեն էկավ, տեսնիմ օր թաքավորի տղեն մեռեր է, խարս լե խետ առան էկան, բերեցին դրին կուշտս, դառցան, գացին։

Ես էն տեխ քիչմ՝ ուրախցա, հացն էլ շատցավ, ես էլ օր մի տեսի, օր իմ խեչեն քիչ-քիչ մեռելներ կպակսին։ Ըսեցի, օր մը, ես պիտի նստիմ, էս մեռելներուն մտիկ ընեմ, կա ու չկա էս տեխեն մարթ կա, կուքա էս մեռելներ կառնա կէրթա։

Գիշերմ՝ մնացի արթուն, տեսա կշտես մեռելմ՝ քաշեցին, առան գացին. ընկա մեռելի ետև ես լե գնացի։ Քիչմ՝ գացի, տեսա օր աստղան չափ լուսմ՝ էրևաց, քիչ-քիչ էրթըլով էդ լուսն էլ շատցավ, հ՝ելանք օր մինչև դռան հ՝առեջ, տեսինք օր ո՛չ մեռել կա մեր կուշտ, ո՛չ մարթ։

Ես հ՝ելա դուրս, աղեկմ՝ իշքեցի, ճամբաները սովրա, ըսի՝

«Կանի դառնամ էրթամ իմ կնիկ լե առնիմ գամ»։ Դառցա ետ, էկա առա իմ կնիկ, գացի։ Գացինք էն ծրկեն օր հ'ելեր ենք դուրս, էն ծրկեն մեկ լե հ'ելանք դուրս, էկանք մըր տուն։

Էդա էլ էն կնիկն է. չըք ավդրնա, հարցուցեք ուրնե։

Կնիկ ըսեց.—Համալ է օր կըսիս, իսկի նե՛ ավել կա, նե՛ պակաս։

Տան տիրոջ խեղճ էկան էդ մարթիկ, հ'ելավ ամեկուն քիչմ' փարա տվեց, ըսեց.—Հ'ելեք, քանի ձըր աչք թաց չէ, թողեք գացեք։ Գողութեն հ'ըմեն մարթու քար ու փեշեն չէ։

Մարթիկ հ'ելան թորկեցին էկան ու ահա ու խըրար էրին, օր անգամ մըն ալ գողութենի անուն չի տան։